

ԶԱՐՄԱՆԱՎԻՔ ԵՐԿՌԻՑ

Պ

ԱՏԵՂ

Սխալական ենթադրութիւն մ'է կարծելը թէ աստեղաբաշխական օգտակար դիտողութիւնքն հարկաւորապէս պէտք են որ դիտարանաց անձուկ սահմանին մէջ փակուին . և մարդ չիկրնար ճաշակ առնուլ գործնական աստեղաբաշխութեան ընծայած հաճոյքէն՝ մինչև որ չունենայ հեռադիտակներ , և տեսաբանական ու աստեղաբաշխական ուրիշ գործիներ : Մեր արարչապետը պարգևեր է մեզի այնպիսի պքանչելարուեստ գործի մը , որ է աչքն , ու վառեր է 'ի մեզ իմացականութեան լոյսն , որով կարող ենք ուղղել այն գործարանը վսեմագոյն հայեցողութեանց : Եւ նոյն իսկ ուղելով ընդարձակել մեր տեսողական գործարանաց բնական սահմանները , կամ ուղղել մեր տեսութիւնը մեծագոյն ճշգութեամբ՝ արուեստական ու դիտնական սատարներով , կրնանք օգտուիլ ամենապարզ և դիւրագին միջնորդներով : Թատրոնի հասարակ դիտակ մը շատ անդամ կրնայ որոշակի երեցունել մեզի բազմաթիւ առարկաներ , որոնք պարզ աչքով անտեսանելի կը մնային . սովորական դիտակն ալ , որ ամենուս ձեռքը կը գտնուի , կրնայ օգտաւէտ ծառայութիւններ մատուցանել : Եւ անոնք որ ընդհանրապէս իրենց զբաղմունք ըրած են երկնային տեսարանը , և որոնց ընտանի է անոր կերպարանքն ու փոփոխմունքն , առանց դժուարութեան . կրնան այնպիսի այլևայլ պարզ հնարք ճարտարել , որոնցմով կը յաջողին ճշգելու և չափելու այն առարկայից վերբերական դիրքը , և գուշկել անոնց երեալուն և աներեւութեանալուն յաջորդութիւնը : Արդ մենք ալ կ'ուղենք այնպիսի դիւրին ու պարզ կանոններ տալ , որոնք կարող ըլլան

պարզ աչաց օգնութեամբ կամ մանաւանդ տեսաբանական հասարակ՝ ստարներու գործածութեամբ դիւրացընել ամենուն՝ օգտակար կերպով պարապելու երկնից այս դիտողութեանցն :

Ուստի ենթադրենք այնպիսի մէկն որ բոլորովին թափուր ըլլայ աստեղաբաշխական ծանօթութիւններէ , անամպ գիշեր մը բաց տեղ մը կանգնի երեսը դէպ 'ի հարաւ , դիտելով երկնից աստեղազարդ կամարը : Շատ չանցնիր կը տեսնէ որ այն գեղեցիկ տեսարանը , զոր երկինք կ'ընծայեն իրեն շուրջանակի , հաստատուն չէ , այլ անկայուն է : Ժամու մը միջոց կը դիտէ որ այլ և այլ առարկայք՝ որոնք հորիզոնին վրայ տեսանելի էին իրեն աջակողմը , հետզիետէ կ'աներեւութեանան . և ընդ հակառակն շատ առարկայք որոնք հորիզոնին վրայ տեսանելի չէին իրեն ձախակողմը , յաջորդաբար յերևան կուգան : Աւելի մտադրութեամբ դիտելով կը տեսնէ որ այն առարկայքն որոնք երկնից բարձրերն էին դէպ 'ի հարաւ ուղղութեամբ , տեղերնին փոխեր են ու դէպ 'ի աջ խոնարհեր են , այսինքն դէպ 'ի արևմուտք . մինչդեռ միւս առարկայք՝ որոնք երկնից միջակիտին դէպ 'ի ձախ էին , վերացեր բարձրացեր են :

Եւ այս մեր բացատրութեանն օգնելու համար , երեակայենք թէ ամբողջ հաստատութիւնը մեծագոյն շրջանակով մը կտրուած ըլլայ , և սկսեալ հորիզոնին այն կիտէն՝ առ որ դիտողը դարձած է , անցնի դագաթնաձիգ ուղղութեամբ զլիսուն վրայէն և իջնէ ետեէն դէպ 'ի հիւսիս կէտն հորիզոնին : Այս մեծագոյն շրջանակն , որ երկնային միջօրէական կ'ըսուի , կը բաժնէ բռվանդակ տեսանելի հաստատութիւնն երկու հաւասար մասունք . մէկը դէպ 'ի արևմուտք կամ դէպ 'ի աջ , միւսը դէպ 'ի արևելք կամ դէպ 'ի ձախ դիտողին : Որ շարունակելով իր մտադիր զննութիւնն երկնից յաջորդական այս փոփոխմանցը վրայ , շուտ մը կ'անդրադառնայ որ հաստատութեան տեսանելի առարկայքն ամենն ալ շարժման մէջ

են . արևելից կողմանէ կը ծագին , կը բարձրանան դէպ 'ի միջօրէականն , ու ետքը կը խոնարհին դէպ 'ի արևմուտք և կ'իջնեն հորիզոնին տակն ու աներեսոյթ կ'ըլլան :

Հիմա ենթադրենք թէ այն դիտողն ինքն իր չորս կողմը դառնայ , և հաստատէ երեսը դէպ 'ի հիւսիս : Տարբեր տեսարան մը կը բացուի իրեն առջեն : Համարելով որ մեր կլիմայից տակը կը դժունուի , անմիջապէս վերահասու կ'ըլլայ որ երկնից երեսը տեսնուած առարկայից մեծագոյն մասը ոչ կ'երևայ և ոչ կ'աներեսութանայ , այսինքն ոչ կը ծագի և ոչ կը մտնէ : Չոր օրինակ , արեը մայրը մտնելէն ետքն երբ աստղերը կը սկսին երևալ , թէ որ այսպիսի առարկայ մը գլխուն վրայ տեսեր էր , կը նայի որ ժամէ ժամ նոյն առարկայն դէպ 'ի ձախ կ'իջնէ , այսինքն դէպ 'ի արևմուտք , և անդադար կը հեռանայ միջօրէականէն . թէպէտ մինչեւ հիմա ալ նոյն բանը հաւասարապէս տեսեր էր՝ երբ դէպ 'ի հարաւ կը նայէր , և արևմուտքն իր աջակողմն ունէր , սակայն քիչ մը ժամանակէն կը տեսնէ որ ուրիշ երեսոյթ մըն է յայտնուածն : Այն առարկայն միջօրէականն անցնելէն դրեթէ երեք ժամ ետքը չափ մը անկէ հեռանալէն վերջն՝ ալ առաջ չերթար , այլ ընդ հակառակն կը սկսի նորէն մօտենալ միջօրէականին . բայց այս շարժման ժամանակ միանդամայն հորիզոնին ալ կը մօտենայ , իրը թէ այն ալ հորիզոնին տակը մտնելու ըլլար : Սակայն չիմտներ . վասն զի եթէ գիշերն երկարելու ըլլար և առաւտոն ուշանար , որպէս զի այն առարկայն լուսոյն մէջ չծածկուեր , տասուերկու ժամ ետքն ալ դեռ ևս տեսանելի կ'ըլլար , ու նորէն միջօրէական դարձած կ'ըլլար , առանց մտնելու հորիզոնին տակը կամ աներեսութանալու : Այն առարկայն միջօրէականին բարձրագոյն կիտէ մը շարժելով դէպ 'ի խոնարհագոյն կէտն անցնելուն , երկնային կիսարոլորակ մը կը կտրէ , որուն տրամադիծն է միջօրէականին այն մասն՝ որ ընթացիցը բարձ-

րագոյն կիտին ու խոնարհագոյն կիտին մէջ տեղը կ'ընկնի :

Եթէ կարելի ըլլար դիտել նոյն առարկայն երկրորդ տասուերկու ժամուն ալ , կը տեսնէինք որ երկրորդ կիսարոլորակին վրայ կը շարժէր միջօրէականին արևելեան կողմն , այսինքն դիտողին դէպ 'ի աջակողմն , և այս երկրորդ տասուերկու ժամէն ետքն այն առարկայն կը վերադառնայ միջօրէականին բարձրագոյն կիտին վրայ , ուստի սկսեր էր շարժիլ :

Ուրեմն այն առարկայն ոչ երեք կը մտնէ և ոչ կը ծագէ մեր կլիմայից տակ . և թէ որ գիշերը շարունակէր , կը տեսնէինք որ անդադար կը թաւալէր երկնային բոլորակի մը վրայ երկու հաւասար կիսարոլորակ բաժնուած , մէկը դէպ 'ի արևելք և մէկալը դէպ 'ի արևմուտք միջօրէականին , կատարելով իր շրջանն այն բոլորակին վրայ , և դարձադարձ վերադառնալով միջօրէականին նոյն կիտին վրայ զրեթէ յետ 24 ժամուց :

Ինչ որ ըսինք մէկ առարկայի մը համար՝ նոյն բանն իմանալու է ուրիշ բազմաթիւ առարկայից համար ալ , զորոնք կը տեսնէ դիտողը դէպ 'ի հիւսիս դարձած , ինչպէս որ ենթադրեցինք : Այս առարկաները ամենն ալ կը տեսնենք որ բոլորակ կը շրջաբերին . բայց ամենն ալ մի և նոյն բոլորակը չեն շրջաբերիր . ոմանք մեծ բոլորակաւ , ոմանք ալ փոքր . սակայն ամեն այս բոլորակներն երկու մասնաւոր յատկութիւն ունին , որոնք մեծապէս նշանաւոր են . մէյմը որ ամենն ալ մի և նոյն կեղրոնն ունին , որ երկնային միջօրէականին մէկ կէտն է , մէյմալ որ այն ամեն առարկաները որոնք այլևայլ բոլորակներու վրայ կը շարժին , ճիշդ մի և նոյն ժամանակի մէջ կը կատարեն իրենց շրջանը :

Այս երկնային տեսարանը քանի մը գիշեր հետզհետէ ուշի ուշով զննելէն ետև , կը տեսնէ դիտողն որ այն առարկաներն որոնք գլխուն վրայ կախուեր են , ամենեին չեն փոխեր իրենց վերբերական դիրքն ու համաձեռնութիւնը :

Եւ այս նշանաւոր պարագայն այնչափ աւելի աշքի կը զարնէ, որշափ այն առարկաները մեծապէս կը տարբերին մէկմէկէ իրենց առերևոյթ պայծառութեամբը. վասն զի ոմանք պայծառ կը փայլին և որոշ կը տեսնուին, ոմանք ալ հազիւ կ'որոշուին: Առանց դժուարութեան դիտողը շուտ մը կ'ընտանենայ անոնց կարգաւորութեանը ու վերբերական համաձեռութեանը, որոնք պայծառ կը փայլին և որոշ կը տեսնուին. և իր երևակայութեանը մէջ տեղաւորելով զանոնք, այնպէս միտքը կը պահէ անոնց դիրքն ու ձեւը, որ զանոնք նորէն տեսնելուն պէս մէկէն կրնայ ճանչնալ:

Տիեզերաց երեսը սփուռած այն բազմաթիւ առարկայից անփոփոխ համաձեռութիւնն ու վերբերական դիրքն այնպէս կարծել կու տան՝ որ անոնց ամենուն կատարած շրջաբերութեան շարժումն իւրաքանչիւր առանձին ու անկախ առարկային յատուկ շարժումն չըլլայ, այլ թէ նոյն իսկ բովանդակ հաստատութիւնը շարժի, որուն վրայ անոնք իրը թէ բնեռած ըլլային: Համառօտ ըսելով, հաստատութիւնը մեզի կը տեսնուի իրը դատարկ գունտ մը անհուն մեծութեամբ, որուն կեղրոնը դիտողն է կեցեր, և որուն մակերեսութիւն վրայ բնեռած են անհամար բազմութեամբ առարկայք, զորոնք կը դիտէ նա: Այս մեծահրաշ գունտը կը տեսնենք որ շրջաբերութեան շարժումն ունի տրամագծի մը վրայ իրու առանցից, կատարելով ամբողջ շրջան մը քսանը չորս ժամուց մէջ: Այն տրամագիծը, որուն չորս դին հաստատութիւնը կը թաւալի, կամ կը կարծուի թաւալիլ, դէպ 'ի որոշեալ կէտ մը ուղղուած է միջօրէականին հիւսիսային քառորդին վրայ, և այն կիտին բարձրութիւնը դիտողին հորիզոնին վրայ միշտ իր կեցած տեղոյն լայնութեանն ամենայն ճշդութեամբ կը համապատասխանէ: Հաստատութեան այս թաւալական շարժումն, որ հետն անհամար առարկաներ առած կը տանի, կա-

տարելապէս կը մեկնէ այն ամեն երևոյթ ներն որ վերագոյն ստորագրեցինք, ինչպէս ուրիշ շատ մը երևոյթներ: Այսպէս երկնագնտին վրայի ամեն առարկաները զուգահեռական բոլորակներով անդադար կը շարժին անոր առանցից չորս կողմը, և այս բոլորակներն երթալով կը փոքրկանան որչափ առարկաները բեեռին կը մօտենան: Երբ դիտողն հարաւ դառնայ, կը տեսնէ որ այն առարկայից կտրած բոլորակներն ըստ մասին հորիզոնին վրայ են և ըստ մասին հորիզոնին տակն են, և հետեւբար նոյն առարկաներն հետզհետէ կը ծագին ու կը մտնեն: Բայց երբ դէպ 'ի հիւսիս դառնայ, կը տեսնէ որ այն առարկայից մեծագոյն մասը մօտենալով առանցից ծայրին՝ որուն չորս կողմն երկնագունտը կը շարժի, հետզհետէ աւելի պղտիկ բոլորակներ կը կտրեն, որոնք բոլորովին հորիզոնին վրայ ըլլալով՝ նոյն առարկաներն ոչ երբէք կը ծագին և ոչ կը մտնեն:

Մինչև հիմա ըսածներնէս դիւրին է հետեւցունել որ եթէ առարկայ մը միջօրէականին ճիշդ այն կիտին վրայ գըտնուի՝ ուր կը լմբննայ առանցքը, որուն չորս կողմն երկնագունտը կը դառնայ, պէտք է որ նոյն առարկայն անշարժ մնայ, և բովանդակ տեսանելի հաստատութեան վրայ այս միակ առարկայն հարկ է որ անշարժ ըլլայ: Բայց իրօք ճիշդ նոյն կիտին վրայ երկինքն աստղ մը չկայ, այլ այն կիտին ամենամօտ աստղ մը կայ, որ թէպէտ անոր չորս կողմը կը դառնայ փոքրիկ բոլորակաւ մը, որուն տրամագիծը գրեթէ լրացեալ լուսնին վեց անգամն է. սակայն այս շարժումն աստեղաբաշխական գործիներով միայն կ'իմացուի. ուստի հասարակ դիտողութեան ամեն պիտոյիցն համար այն աստղը կրնայ իրը անշարժ համարուիլ, և առնուիլ իրը նշան ուր կ'երթայ կը հանգչի առանցից հիւսիսային ծայրը, որուն չորս կողմն երկնագունտը շարժիլ կը կարծուի: Երկնագնտին այս կէտը բեեռ կ'ըսուի. և որովհետեւ ասոր համապատ-

շաճ ուրիշ կէտ մըն ալ կայ առանցից միւս ծայրը, որ մեր հորիզոնին տակը կը գտնուի՝ որով անտեսանելի կ'ըլլայ մեզի, այն ալ բևեռ կ'ըսուի, և այս երկու կէտերը կը զանազանուին. տեսանելին՝ երկնից հիւսիսային բևեռը կ'ըլլայ, և անտեսանելին՝ երկնից հարաւային բևեռը կ'ըլլայ:

Երկնագնտին այս շարժումն առերևոյթ է, և տեսաբանական խարէութիւն մըն է, որ երկրիս իր առանցիցը վրայ օրական թաւալումէն առաջ կուդայ: Բայց այս խնդիրս մեր ներկայ ըսելիքին հետ անմիջական կապ մը չունենալուն, բաւական է որ նշանակենք ու անցնինք:

Երկնից դիտողութեանն ամեն պէտքը կը լեցուին, եթէ համարինք որ երկնագունտը իր առանցիցը վրայ կը թաւալի, գրեթէ քսանը չորս ժամուց մէջ շրջան մը կատարելով, և տանելով հետն այն ամեն առարկաներն որ վրան կը տեսնուին: Եւ որովհետև այն առարկաներն, որ անհամար թուով սփռուած են երկնից երեսն, և մեծապէս կը տարբերին մէկմէկէ իրենց առերևոյթ պայծառութեամբն, և իրարմէ կը զանազանուին բոլորովին տարբեր և շատ անդամ նշանաւոր համաձեռնութեամբ, անոր համար աստեղաբաշխք հնուց ՚ի վեր անոնց այլեայլ անուանակոչութիւններ հնարեր են՝ զանոնք նշանակելու համար, հիմնելով մաս մը անոնց վերբերական պայծառութեանը վրայ, մաս մըն ալ անոնց համաձեռնութեանը վրայ:

Եթէ աստեղաց ցուցակ մը կազմենք, որուն մէջ իւրաքանչիւր աստղ որոշեալ տեղ մը բռնէ իր պայծառութեանն համեմատ, ամենէն լուսաւորներն առաջին տեղին դնելով, և թէ որ ուզենք այս ցուցակը բաժնել դաս դաս աստեղաց՝ անոնց լուսոյն նուազութեանը կարգաւ, անկարելի կ'ըլլար հաստատել սահման մը ուր իւրաքանչիւր յաջորդական դասը կը լմըննար ու անմիջապէս ետևինն կը սկսէր. վասն զի աստղի մը պայծառութեանն աստիճանն ուրիշ

աստղի մը հետ բաղդատելով անզգալի է: Եւ սակայն անոնց վերբերական պայծառութեանն աստիճանին համեմատ բաժանմունք մը դնել օգտակար սեպուեր է հնուց ՚ի վեր. և ամեն ժամանակի աստեղաբաշխք հաւաներ են այսպիսի դասաւորութիւն մը ընել, թէ և կամայական և ըստ հաճոյս ըլլայ, ինչպէս իրօք ալ պէտք է որ ըլլան յաջորդական դասերուն սահմանները: Ըստ այսմ դասաւորութեան, աստղերէն ոմանք որ ամենէն աւելի պայծառ կը տեսնուին երկնից երեսը, ըսուեցան առաջին կարգի աստեղք. այլք որ նուազպայծառութիւն ունին քան զառաջիններն՝ ըսուեցան երկրորդ կարգի աստեղք. և այսպէս հետզհետէ դասաւորելով մինչև վեցերորդ կարգի ամենէն մանր աստեղք, որոնք պարզ աչքով կը տեսնուին:

Իւրաքանչիւր կարգի աստեղաց թիւն հետզհետէ արագ արագ կ'աճի որչափ լուսաւորութիւննին կը նուազի, ինչպէս կը տեսնուի հետևեալ ցուցակին մէջ.

ա.	կարգի.	.	.	20	աստեղք.
թ.	կարգի	.	.	65	»
դ.	կարգի	.	.	190	»
ե.	կարգի	.	.	425	»
ե.	կարգի	.	.	1100	»
զ.	կարգի	.	.	3200	»
է.	կարգի	.	.	13000	»
ը.	կարգի	.	.	40000	»
թ.	կարգի	.	.	142000	»

Պարզ աչքով որոշ տեսնուածներն, ինչպէս ըսինք, առաջին վեց կարգիններն են, որոնք ընդ ամենն 5000–6000 կը հասնին: Այս թիւն որչափ ալ մեծ ըլլայ, բան մը ըսել չէ բաղդատելով աստեղաց բոլորական թուոյն հետ, որ հեռաղիտակներով կը տեսնուին. որչափ այս գործեաց զօրութիւնը կ'աճի, այնչափ անոնց թիւն ալ կ'աւելնայ, և որչափ հեռուները կը ձգուի տեսութիւնն, այնչափ աւելի նորանոր աստղեր յերեսն կու դան. և ՚ի զուր կը փնտոենք հաստատութեան սահմանները: Բայց առ այժմ մեր դիտողու-

թիւներն այն աստեղաց վրայ են, ու ըսկ միայն պարզ աչքով կը տեսնուին :

Վերագոյն ըսինք թէ երկնից առարկաներն իրարու նկատմամբ ընդհանրապէս անփոփոխ դիրք մը կը պահեն, և ուրիշ շարժումն չունին՝ բայց եթէ ինչ որ երկնագունտն ունի, որուն վրայ հաստատուած կը կարծուին. սակայն քանի մը փոքր բացառութիւններ կան : Մէկ քանի առարկայք կան, որոնց մէջ ամենէն նշանաւորներն արեն ու լուսինն են, որոնք մինչ հաղորդ են երկնագընտին օրական շարժմանը, միւս կողմանէ ալ շարունակ դիրքերնին կը փոխեն երկնից երեսը : Այս առարկաներն, 'ի բաց առեալ արեն ու լուսինը, մոլորակ կ'ըսուին, իսկ միւս առարկայքն՝ որոնք անփոփոխ կը պահեն իրենց վերբերական դիրքն, և որոնց վրայ է այս տեղ խօսելիքնիս, հաստատուն աստղ կ'ըսուին :

Դ

Համաստեղորիւնք

Որչափ ալ առ երեսս անփոփոխ դիրք մը պահեն աստղերն իրարու նկատմամբ, և ըստ այնմ կարդ կարդ բաժնուին, սակայն զանոնք ճանչնալու և դիւրաւ միտք պահելու համար խումբ խումբ կը բաշխուին, և իւրաքանչիւր խումբ աստեղատուն կամ համաստեղորիւնքն կ'ըսուի : Հին ատենէն 'ի վեր այս

ամեն մէկ խումբին երևակայեալ ձեւեր տրուեցան, մարդու, կենդանեաց, և այլեայլ բնական ու արուեստական առարկայից, և ըստ այսմ ալ անոնց անուններն առին : Այս կերպով երկընքին երեսն ըստ կամս այլեայլ մասունք բաժնուեցաւ, ըստ իմիք նման երկրագընտիս մակերեսութիւն, որ այլեայլ տէրութիւններ ու ինքնակալութիւններ բաժնուած է : Երկնից այս բաժանմանց իւրաքանչիւրը կը բովանդակէ շատ մը մեծ ու պղտիկ աստղեր, որոնց ամբողջութենէն կը կազմուի համաստեղութիւն, և կ'որոշուի այն յատուկ անուամբն որ տրուած է անոր :

Հիները քառասուն և ութ համաստեղութիւն կը ճանչնային, քսան ու մէկ հիւսիսային կիսագնտին վրայ, տասուերկու՝ զողիակոսի կամարին վրայ, և տասն ու հինգ՝ հարաւային կիսագնտին վրայ : Բայց աստեղաբաշխական գիւտերուն յառաջանալովն աստեղատանց թիւն ալ հետզհետէ աճեցաւ, և հիմա մեծ ու պղտիկ հարիւր տասն և եօթն համաստեղութիւնք կը համբուին . 56 հիւսիսային կիսագնտին վրայ, 12 զողիակոսի կամարին վրայ և 49 հարաւային կիսագնտին վրայ :

Հիւսիսային կիսագնտին վրայ, արջային բնեռէն սկսեալ, ձախէն դէպ 'ի աջ երթալով ու միշտ հասարակածին շրջանակին մերձենալով, 56 համաստեղութիւններն ասոնք են հետևեալ կարգաւ.

1. Փոքր Արջ .
2. Վիշապ .
3. Կեփէոս .
4. Կասիոպէ .
5. Եղջերու .
6. Մէսիէ կամ Պահապան Հնձոց .
7. Ընձուղտ կամ Զանալութ .
8. Մեծ Արջ կամ Սայլ .
9. Որսական Բարակը (Աստերիոն և Քարա) .
10. Սիրտ կարողոսի Բ .
11. Եղող կամ Անդէորդ .
12. Քառորդ գործի որմոյ .

La Petite Ourse.

Le Dragon.

Céphée.

Cassiopée.

Le Renne.

Le Messier.

La Giraffe.

La Grande Ourse.

Les Levriers.

Le Cœur de Charles II.

Le Bouvier.

Le Quart de Cercle mural.

13.	Հիւսիսային Պսակ .	La Couronne Boréale.
14.	Վահագն կամ Հերակլէս .	Hercule.
15.	Լախտ .	La Massue.
16.	Արմաւենի և Կերպերոս .	Le Rameau et Cerbère.
17.	Քնար .	La Lyre.
18.	Կարապ .	Le Cygne.
19.	Մողէզ .	Le Lézard.
20.	Փրեդերիկեայ Պատիւ .	Les Honneurs de Frédérique.
21.	Անդրոմեդա .	Andromède.
22.	Հիւսիսային Եռանկիւն .	Le Triangle.
23.	Փոքր Եռանկիւն .	Le Petit Triangle.
24.	Ճանճ .	La Mouche.
25.	Պերսէոս .	Persée.
26.	Գլուխ Մեղուսայ .	La Tête de Méduse.
27.	Կառավար .	Le Cocher.
28.	Ուկք .	Les Chevreaux.
29.	Հեռադէտ Հերշելի .	Le Télescope d'Herschel.
30.	Լուսակն կամ Քաւթար .	Le Lynx.
31.	Փոքր Առիւծ .	Le Petit Lion.
32.	Բերենիկեան Գէս .	La Chevelure de Bérénice.
33.	Մենալոս լեառն .	Le Mont Ménale.
34.	Օձ .	Le Serpent.
35.	Օձակալ կամ Ոփիոքոս .	Ophiuchus.
36.	Բոնիադովսքեայ արքունի Ցուլ .	Le Taureau royal de Poniatowski.
37.	Արծիւ .	L'Aigle.
38.	Անտինոս .	Antinoüs.
39.	Նետ .	La Flèche.
40.	Աղուէս և Սագ .	Le Renard et l'Oie.
41.	Դպիին .	Le Dauphin.
42.	Փոքր Զի .	Le Petit Cheval.
43.	Պեղասոս .	Pégase.
44.	Կէտ կամ Պալենա .	La Baleine.
45.	Բազմաստեղը կամ Բոյլք .	Les Pléiades.
46.	Հիադք .	Les Hyades.
47.	Գէորգեայ Քնար .	La Harpe de Georges.
48.	Երիդանոս Գետ .	L'Éridan.
49.	Հայկ կամ Որիոն .	Orion.
50.	Միեղջերու .	La Licorne.
51.	Փոքր Շուն .	Le Petit Chien.
52.	Երկու Էշք և Մսուր .	Les deux Anes et Praesepe.
53.	Էգ Հիդրա կամ Ջրային Օձ .	L'Hydre femelle.
54.	Սէքսադանդ կամ Վեցերորդ գործի Երկնային :	Le Sextant d'Uranie.

Զողիակոսի կամարին վրայ , ձախէն դէպ 'ի աջ երթալով , 12 համաստեղութիւնքն ասոնք են հետեւեալ կարգաւ .

1. Խոյ .	Le Bélier.
2. Ցուլ .	Le Taureau.
3. Երկաւոր .	Les Gémeaux.
4. Խեցգետին .	Le Cancer.
5. Առիւծ .	Le Lion.
6. Կոյս .	La Vierge.
7. Կշիռ .	La Balance.
8. Կարիճ .	Le Scorpion.
9. Աղեղնաւոր .	Le Sagittaire.
10. Այծեղիւր .	Le Capricorne.
11. Զրհոս .	Le Verseau.
12. Ձկունք :	Les Poissons.

իսկ հարաւային կիսագնտին վրայ , հակարջային բևեռէն սկսեալ , ձախէն դէպ
՚ի աջ երթալով ու հասարակածին շրջանակին մօտենալով , 49 համաստեղու-
թիններն ասոնք են հետեւեալ կարգաւ :

1. Ոգդանդ կամ Ութերորդ .	L' Octant.
2. Գետնառիւծ .	Le Caméléon.
3. Հարաւային Ճանճ .	La Mouche Australe.
4. Դրախտահաւ .	L'Oiseau de Paradis.
5. Սիրամարգ .	Le Paon.
6. Հնդիկ .	L'Indien.
7. Տուգան կամ Սաղ Ամերիկոյ .	Le Toucan.
8. Փռքը Ամպ .	Le Petit Nuage.
9. Արու Հիդրա կամ Զրային Օձ .	L'Hydre Mâle.
10. Լեառն Սեղան .	La Montagne de la Table.
11. Մեծ Ամպ .	Le Grand Nuage.
12. Տարանկիւնային Ցանց .	Le Réticule Rhomboïde.
13. Տորատ կամ Թրաձուկն .	La Dorade ou Xiphias.
14. Մոյթ Նկարչաց .	Le Chevalet du Peintre.
15. Թռչական Չուկն .	Le Poisson volant.
16. Նաւ Արդիացւոց .	Le Navire d'Argo.
17. Կաղնի Կարոլոսի Բ .	Le Chêne de Charles II.
18. Հարաւային Խաչ .	La Croix du Sud.
19. Ձիացուլ .	Le Centaure.
20. Դայլ .	Le Loup.
21. Կարկին .	Le Compas.
22. Հարաւային Եռանկիւն .	Le Triangle du Sud.
23. Անկիւնաչափ և Քանոն .	L'Équerre et la Règle.
24. Սեղան .	L'Autel.
25. Հեռադիտակ .	Le Télescope.
26. Հարաւային Պսակ .	La Couronne du Sud.
27. Մանրադիտակ .	Le Microscope.
28. Կռունկն .	La Grue.
29. Փիւնիկ .	Le Phénix.
30. Ճօճանակաւոր Ճամացոյց .	Le Pendule.
31. Գրիչ քանդակագործի .	Le Burin.
32. Աղաւնի .	La Colombe.

33. Նապաստակ .
 34. Մեծ Շուն .
 35. Գործարան Տպագրութեան .
 36. Կողմնացոյց .
 37. Ուղեշափ նաւու .
 38. Կատու .
 39. Շնչելոյզ Գործի .
 40. Բմպանակ .
 41. Ագռաւ .
 42. Կիբղէ մենաւոր .
 43. Վահան Սոբիեսկիայ .
 44. Օդապարիկ Գունտ .
 45. Հարաւային Զուկն .
 46. Գործարան Քանդակագործի .
 47. Ելեքտրական Գործի .
 48. Քիմիական Հնոց .
 49. Արքունի գաւազան Պրանտե պուրկայ .
 50. Սուր .
 51. Գօտի Սրոյ :

- Le Lièvre.
 Le Grand Chien.
 L'Atelier du Typographe.
 La Boussole.
 Le Loch.
 Le Chat.
 La Machine Pneumatique.
 La Coupe.
 Le Corbeau.
 Le Solitaire.
 L'Écu de Sobieski.
 L'Aérostat.
 Le Poisson Austral.
 L'Atelier du Sculpeur.
 La Machine Électrique.
 Le Fourneau Chimique.
 Le Sceptre de Brandébourg.

L'Épée.
 Le Baudrier.

Որպէս զի սիրողք աստեղաբաշխութեան կարող ըլլան ընտանենալու երկնից այս անուանակոչութեանցը, և զիւրաւ որոշելու ու ճանշնալու ոչ միայն գլխաւոր համաստեղութիւնները մէկիկ մէկիկ, այլ և անոնց իւրաքանչիւրին վրայ գտնուած ամէն մէկ աստղերը, կը ջանանք այնպիսի բացատրութիւններ տալու, որ մեծապէս դիւրացընեն այս նպատակին հասնիլն :

Մի ևնոյն համաստեղութեան մը մէջ գտնուած աստղերն իրարմէ զանազանելու համար, աստեղաբաշխք Պայէռ (Bayeg) անունով գերմանացւոյն 1603 թուականին տուած օրինակին հետևելով, յունարէն այրութենի տառերը կը գործածեն. երբեմն աստեղաց պայծառութեանը կարգաւ, երբեմն ալ անոնց շարուածքին կարգաւ: Երբ համաստեղութեան մը աստեղաց թիւն առաւելու քան զյունարէն այրութենի տառերն, աստեղաբաշխք լատիներէն այրութենի տառերովը կը շարունակեն, եթէ անոնք ալ շրաւեն՝ թուանշանները կ'առնուն: Ուստի դիւրութեան համար դնենք այս տեղ յունարէն այրութենի տառերն ու անոնց անունները:

α Ալֆա .	ν Նի .
β Վիդա .	ξ Քաի .
γ Ղամմա .	օ Օմիքրօն .
δ Տէլդա .	π Փի .
ε Էփսիլոն .	ρ Ռո .
ζ Զիդա .	σ Սիզմա .
η Իդա .	τ Թաւ .
Թ Թհիդա .	υ Իփսիլօն .
ι Իօդա .	φ Ֆի .
κ Քափիփա .	χ Խի .
λ Լամվտա .	ψ Փսի .
μ Մի .	ω Օմեղա :

Չոր օրինակ, իւրաքանչիւր համաստեղութեան ամենէն պայծառ աստղին վրայ կը դրուի α (ալֆա), երկրորդ պայծառ աստղին վրայ կը դրուի β (վիդա), երրորդ պայծառ աստղին վրայ կը դրուի γ (դամմա), չորրորդ պայծառ աստղին վրայ կը դրուի δ (տելդա), և այսպէս հետզհետէ. և այս չորս տառերն համաստեղութեան մը չորս գլխաւոր աստղերը կը ցուցընեն, ու մէկ համաստեղութենէ ուրիշ համաստեղութիւն անցնելով՝ այս չորս տառերը այլևայլ պայծառութիւն ունեցող աստղեր կը նշանակեն: Ինչպէս,

Երբ կ'ըսենք ու Մեծ Շան, ու Ցլուն, ու
Հայկին, և այլն, չենք ուզեր իմանալ թէ
այս ամեն աստղերը մի և նոյն պայծա-
ռութիւնն ունին :

Հինք՝ աստղերն այլեայլ խումբ կամ
համաստեղութիւն բաժնելէն և անոնց՝
կորց, դիւցազանց, շնչաւորաց, և այլն,
անուններ տալէն ետև, որ ամեննեին
վերաբերութիւն չունին այն աստեղաց
ոչ դրիցը և ոչ ձեռոյն հետ, անոնց վրայ
առանձին մնասեր ալ զանազանեցին.
Ինչպէս՝ աչք Ցլուն, սիրտ կարճին, աջ
ուս Հայկայ, սիրտ Հիդրայ, սիրտ Առիւ-
ծուն, հասկ կուսին, և այլն :

Նշանաւոր աստղերէն շատերն ալ
յունական կամ արաբական անուանա-
կոչութիւններ առին, որոնք մինչև հի-
մա ալ կը պահուին, և են.

Սիրիոս՝ (Sirius) Մեծ Շան վրայ. ա-
սիկայ երկնից ամենէն պայծառ աստղն
է :

Անդարէս՝ (Antarès) կարճին սիրտը:
Ալտեպարան՝ (Aldébaran) Ցուլին
աչքը:

Հոեգուղոս՝ (Régulus) Առիւծուն
սիրտը :

Դենեբոլա՝ (Dénébola) կամ ագի Ա-
ռիւծուն. այս համաստեղութեան ա-
մենէն պայծառ աստղն է :

Ռիգէլ՝ (Rigel) Հայկայ ձախ ոսքին
վրայ :

Պէտայդայզ՝ (Bétaigeuse) Հայկայ
աջ ուսին վրայ. այս համաստեղութեան
ամենէն պայծառ աստղն է :

Մարտիկ՝ (Bellatrix) Հայկայ ձախ
ուսին վրայ :

Պրոկիոն՝ (Procyon) Փոքր շան ամե-
նէն պայծառ աստղը :

Կաստոր՝ (Castor) Երկաւորին դէպ
ի արևմուտք եղած դլսոյն վրայի պայ-
ծառ աստղը :

Պողիտեկիս՝ (Pollux) Երկաւորին
դէպի արևելք եղած դլսոյն վրայի պայ-
ծառ աստղը :

Ֆոմալհաւ՝ (Fomalhaut) Հարաւային
ջկան բերնին վրայ :

Մարքաբ՝ (Markab) Պեղասոսին
թւին վրայ :

Ալճենիբ՝ (Algénib) Պեղասոսին թւին
ծայրը :

Ալկոլ՝ (Algol) Մեղուսային դլսուն
ամենէն պայծառ աստղը :

Շէադ՝ (Scheat) Պերսէոսի աջ ուսին
վրայի պայծառ աստղը :

Վեկա՝ (Véga) Քնարի ամենէն պայ-
ծառ աստղը :

Ակն պատուական՝ (Margarita) Հիւ-
սիսային Պսակին ամենէն պայծառ
աստղը :

Տէնէբ՝ (Dénéb) Կարապին ամենէն
պայծառ աստղը :

Ալիծ կամ Ալհայոդ՝ (La Chèvre ou
Alhaïot) Կառավարին ամենէն պայծառ
աստղը :

Արքտորոս՝ (Arcturus) Եղողին ամե-
նէն պայծառ աստղը :

Հնձանահար՝ (Vindemiatrix) Կուսին
աջ ձեռաց մօտ եղած աստղը :

Աքառնար՝ (Acharnar) Երիդանոսի
ամենէն պայծառ աստղը. անտեսանե-
լի է յԵւրոպա :

Ալդայիր՝ (Altaïr) Արծուին ամենէն
պայծառ աստղը :

Կանոպոս՝ (Canopus) Հարաւային
կիսագնտին ամենէն պայծառ աստղը,
Արգոնաւուն ղեկին վրայ :

Բևեռային աստղ՝ (La Polaire) Փոքր
Արջին ամենէն պայծառ աստղը, հիւ-
սիսային կամ արջային բևեռին մօտ :

Չմոռնանք դարձեալ յիշելու որ այս
կերպ պատկերացընելն աստեղաց բազ-
մութիւնը իրր մասունք ամբողջի մը,
համաստեղութեան մը, մտաց օդնել
մ'է, և ամեննեին իրականութիւն չու-
նի : Երկու աստղ որ իրարու մօտ կը
տեսնենք, գուցէ իրարմէ այնչափ հե-
ռու ըլլան, որշափ մենք անոնց մէկէն
հեռու չըլլանք, և մեր տեսութիւնն որ
մէկէն միւսը կ'անցնի՝ ո գիտէ քանի
միլիոնաւոր մղոններ հեռուն կը ձգուի,
և անոր համար ալ է որ որոշ կը տես-
նուին :

Երկնից այս աստեղազարդ կերպա-
րանքն եղանակաց հետ կը փոխուին ու
կը նորոգուին : Աստղերէն ոմանք ամեն
դիշեր տեսանելի են տարւոյն ամբողջ

քնթացիցը մէջ, այլը կը ծածկուին ու կը տեսնուին որոշեալ եղանակաց մէջ. ինչպէս թէ երկնից կամարը քիչ քիչ կ'աճապարէ ամեն օր իր օրական շարժումը, որպէս զի ցուցընէ մեզի տարոյն այլեայլ գեշերներուն մէջ իր յաւիտենական գեղեցկութիւնները մեծաւ մասամբ:

ՆՈՎԱՅԻՆ ՎՏԱՆԴԱՑ ԱՌԶԵՒՆ ԱՌՆԵԼՈՒ ՆՈՐԱԳԻՒՏ ՆԱԽԱԿ

Նաւարեկելոց օգնութեան հասնելու նաւակաց միւս տեսակն Մուտի անդղիացի նաւապետին հնարածն է, որ արդէն ծանօթ է աշխարհի իր լիւղական լուսատու աշտարակներովն, և ծովային իրաց ամենամեծ փորձիւն և հմտութեամբն: Այս նաւակին ձեն ամենեին նոյն է ինչ որ կը տեսնայ ընթերցողն առաջիկայ պատկերին մէջ: Ծածկոցին մէջ տեղի կլոր տեղէն, իբրև կեդրոնական կէտէ մը, ուղիղ անկեամբ չորս կողմեր կը բաժնուին, որոց եզերքը կլոր կը վերջանայ, ամենեին տարբեր սովորական նաւուց ողնափայտէն որ սուր է: Յատակը զրեթէ բոլորովին հարթ է. յատակին ու ծածկոցին մէջ եղած միջոցին մէջ կը կենան նաւարեկեալներն իրենց ամեն ունեցածովն: — Նաւակին մակերեսոյթը առ ՚ի շեղ դէպ ՚ի կենդրոն կը բարձրանայ, և ասիկայ նաւակին ամենաբարձր կէտն է, և շըրջանակով մը պատսպարուած է ալեաց բախմանց դէմ: Իսկ նաւակին էական պէտքերն են թիակ մը, երկու կայմ հանդերձ իրենց առագաստներովն, չորս խարիսխ, և մէկ պղտի պտուտակաւոր շոգեշարժ մէքենայ մը:

Այս տեսակ նաւակաց ամենամեծ յատկութիւնն այն է որ շատ թեթև են, ուստի և դիւրաւ կը կառավարուին նոյն իսկ հակառակ հողմոց ատեն. վասն զի անոնց մակերեսոյթն շատ մեծ տարածոց չունենալով, հովը շատ ճնշումն

չի կրնար աղղել: Եւ դարձեալ նոյն պատճառաւ ահագին ալեաց բռնութենէն ամենեին չեն մասառուիր, վասն զի ալեաց ընթացիցը կուտան իրենք զի. րենք և միշտ կը լիւղան ջրոյ վրայ:

Կը սպասուի Մուտինաւապետէն դեռ ուրիշ մեծամեծ և կարևոր գիւտեր. թերեւ այսպէսով կարենան մարդիկ նուազել առ Ովկիան ըրած անբաւ զոհերն:

ՆՈՐԱԲՈՂԲՈՉ

ԱՅԴԵՍՑ ՊԱՀՊԱԽՈՒԹԻՒՆ¹

Բազմահոգ երկրագործ մշակին յոյսըն և ակնկալութիւնն յետ մարտընչելց ընդդէմ ձմեռնական խիստ ցրտոց, սառամանեաց և բքաբեր սաստիկ հողմոց, ցնծալիր բերկրութեամբ կ'ողջունէ՝ կենդանարար և զուարթ գարնան գալուստը, որով ամենայն աղզի աղզի տունկը և բոյսը կը ծնանին և կը ծլին, որոց հետ ահա ՚ի միասին կը սկըսին բարգաւաճ զարգանալ և երկրագործին յոյսն և ակընկալութիւնն: Աակայն դիտնալով որ ամենայն տեսակ ծննդոց մատաղ և դալարի հասակը անփորձ է առաջի յեղափոխ տարերաց ընութեան, մանաւանդթէ շատ անգամ իրենց դեռնորածաղիկ և նորածիլ դիւրազգած վիճակին մէջ դոյզն ինչ փոփոխութեամբ օդոց կը թառամին և կը խամրին ՚ի վիշտ և ՚ի թշուառութիւն եղկելի մշակին, անոր համար պէտք է մեծարթնութիւն բանեցնել, մասնաւորապէս ապրիլի տասնէն սկսեալ մինչև մայիսի տասը, որ է միջոց ժամանակի կարմիր լուսնի (Lune Rousse) ըստ դաղղիացի երկրագործաց անուանա-

¹ Առաջիկայ յօդուածոյս երկասիրողն Երեմեան Պ. Յովակիմ Տրապիզոնեցի, յետ աւարտելց կրթութեան ու ուսմանց ընթացքն ՚ի Մուրատեան Վարժարանի, այժմ կը պարապի երկրագործութեան արուեստին ՚ի Կրինեոն Գաղղիոյ, և կը ցանկայ օգտակար տեղեկութիւններ տալ մշակութեան վրայ: